

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՇՐՋԱՆԸ Կ՝ՈՒՋԷ ՎԵՐԱՄԻԱՆԱԿ ԱՐՑԱԽԻՆ

Պատմական Արցախի մէջ գտնուող, սակայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզէն «վիրաբուժական» գործողութեամբ դուրս ձգուած Շահումեան աւանի կուսակցական խորհուրդը, արտակարգ նստաշրջան մը գումարած է Յուլիսին: Շրջանային Խորհուրդի այս նիստին որոշուած է աւանը մտցնել ԼՂԻՄի կազմին մէջ:

Որոշումը լոյս տեսած է Շահումեանի Շրջկոմի եւ Շրջխորհուրդի օրգան «ՆՈՐ ՈՒՂԻ»ի 90րդ համարին մէջ, եւ հրապարակուած «Արմէն-Փրէս»ի կողմէ:

Ստորեւ ժողովին որոշումը:

Հաշուի առնելով շրջանի բնակչութեան հայկական մասի միահամուռ ցանկութիւնը, եւ ելնելով նրանց բազմաթիւ դիմումներէց ու պահանջներէց, ժողովրդային դեպուտատների Շրջանային Խորհրդի նստաշրջանը ձայների գերակշռող մեծամասնութեամբ (կողմ՝ 53, ձեռնպահ՝ 8) որոշեց. -

1.- Միջնորդել Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի առջեւ քննարկելու «Ատրպէյճանական ԽՍՀ Շահումեան» (գիւղական) շրջանը ատրպէյճանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմի մէջ մտցնելու հարցը:

2.- Խնդրել ատրպէյճանական ԽՍՀ մինիստրների Խորհրդին համապատասխան միջնորդագիր ներկայացնել Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդին:

3.- Խնդրել ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդին վերահսկողութեան տակ վերցնել սոյն որոշման կատարումը:

4.- Ելնելով առանձին դեկավար աշխատողների՝ մարդկանց անվտանգութիւնը չեքաշխատելու յայտարարութիւններէց, խնդրանքով դիմել ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի պաշտպանութեան տակ վերցնելու շրջանի բնակչութեանը:

Ժողովրդական Դեպուտատների Շահումեանի Գիւղական
Շրջխորհրդի նախագահ՝

26 Յուլիս, 1989

Աւան Շահումեան

Վ. ԱՂԱԶԱՆԵԱՆ

Ժողովրդական Դեպուտատների Շահումեանի Գիւղական
Շրջկոմի Խորհրդի Զարտուղար՝
Վ. ՅԱԿՈՒԲԱՆ